ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«01» հուլիսի 2019 թվականի N:299-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՐԵՎՇԱՏԻ ՄԵՏԱՔՍԵԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի N89-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 11.1-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևշատ համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 17-ի N 76-Ա որոշումը, Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի «Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի մայիսի 10-ի նիստի թիվ 04 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի մայիսի 13-ի նիստի թիվ 07 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արևշատի Մետաքսեի անվան միջնակար դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Էմիլյա Ոսկանյանի, Ռուբեն Հարությունյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևշատ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Հովհաննես Զաքարյանին, մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Կարինե Պողոսյանի և Արշալույս Խաչատրյանի, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Գոհար Պետրոսյանի, Սայադ Խաչատրյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Էմիլյա Ոսկանյանի, Նաիրա Մարտիրոսյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևշատ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Սայադ Խաչատրյանին, մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Ռոզա Սարգսյանին, Ելենա Առաքելյանին, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Նազանի Սահակյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N89-Ա որոշման հավելվածում «Հարությունյան Ռուբեն», «Զաքարյան Հովհաննես», «Պողոսյան Կարինե», «Խաչատրյան Արշալույս»,

«Պետրոսյան Գոհար», «Խաչատրյան Սայադ» բառերը համապատասխանաբար փոխարինել «Մարտիրոսյան Նաիրա», «Խաչատրյան Սայադ», «Սարգսյան Ռոզա», «Առաքելյան Ելենա», «Գրիգորյան Հասմիկ» «Սահակյան Նազանի» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է